

ՄԻ ՔԱՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պ. Ս. ԲԵԳԻՐՅԱՆ

1. ՀԵՔԻԱԽ

Այս բառը չկա ՆՀԲ-ում, Առձևոնում և Արմատական բառարանում:

Մալխասյանի «Հայերէն բացատրական բառարանում» (հատ. 3, էջ 103—104), այն գտնում ենք երկու ձևով՝ հեքեաք և հեքեաք: Առաջին ձևի դիմաց Մալխասյանը գրել է՝ «պրս. hikayet»:

Բայց ինչու պարսկերենից:

Նախ՝ հայտնի է, որ հայերենի -իաք-ով (և -աք-ով) վերջացող բառերն արարական փոխառություն են: Պարսկերենից փոխառյալ 140-ի բառերի մեջ միայն մեկն է վերջանում -իաք-ով՝ ֆրիաք «ողբ, հառաչ» (որ Արմ. բառ.-ում գրված է իբրև փոխառյալ պարսկերեն tarvad «օգնություն հայցում» բառից, բայց հենց այստեղ էլ նշված է, որ Պոտուրյանը այն հանգեցնում է արաբ. ֆիրիյեթ «բողոք, հառաչ» բառին)¹: Երկրորդ ունենք Աճառյանի գրչով ձևակերպված հետևյալ ընդհանուր գրությունը. «... եթե մի բառ հայերենից ու պարսկերենից դուրս գտնվում է նաև մի երրորդ լեզվի մեջ, և ստուգարանվում է հենց այդ լեզվով, ուրեմն և պատկանում է այդ լեզվին»:

Ահա ելնելով վերոհիշյալից՝ հեքիաք բառը մենք փոխառյալ պիտի համարենք արաբ. hikaya (թվարկում, հեքիաթ, պատմություն) բառից, որն իր հերթին ծագում է արաբ. haka (պատմել, հորինել) արմատից:

2. ՍՈՒՐՀԱՆԳԱԿ

Այս բառն Արմ. բառ.-ում գտնվում է չստուգարանված բառերի շարքում: Բառարանում, անհամատեղ ստուգարանությունների սլոնակում, Աճառյանը հիշատակում է, որ ՆՀԲ բառս հանգեցրել է սուր կամ սուրհալ բառին, Տերվիշյանը՝ սուրալ կամ սուրհալ բառին, Patrubany բառի բացատրությունը տալիս է այսպես՝ պրս. surx (սկր. cukra)+ andak «եղյալ»: Մառնույնպես սուրհանդակ բառը ծագած է համարել սուրհալ բառից, իսկ հուր-

¹ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 1625—1626: Իսկ տր-ով պարսկերենից փոխառյալ համարվում էին երկու բառ՝ ստհրաթ «սահման» (<պրս. sar «զուլա» և արաբ. (!) hadd «սահման») և շմաթ «կրծկալ, գոգնոց»: Այս վերջինը Աճառյանն սկզբում համարում էր պարսկերենից փոխառյալ (տե՛ս Արմ. բառ., հատ. 6, էջ 380—381), բայց հետագայում ճշտեց ստուգարանությունը և այն հանգեցրեց արաբ. simāṭ հոմանիշ արմատին (տե՛ս «Հայկական է», Հայկական ՍՍԽ ԳԱ «Տեղեկագիր», հաս. 4-րտ., 1950, № 12, էջ 87):

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-րտ., 1940, էջ 225:

շմանը պարզապես նշել է, որ այն -andak մասնիկով պարսկական փոխառություն է³:

Մենք սկզբում ենք պաշտպանել նրանց, ովքեր սուրհանգակ բառը կապել են սուրհալ բաշի հետ և համարել պարսկական փոխառություն: Եվ ահա թե ինչու:

Հիշյալ ստուգաբանությունն անհավաստի համարելու հիմք է հանդիսացել այն, որ բառի պահլավերեն կամ պարսկերեն սկզբնաձևը հալանի չէ: Բայց չէ՞ որ եղակի դեպք չէ, երբ մի բառ պարսկական փոխառություն է համարվում, թեև նրա սկզբնաձևը որոշված չի լինում:

Մյուս կողմից, մասնավորապես առավանգակ բառի կապակցությամբ, Աճառյանը ավելի շուտ հարցականի տակ է առնում բառի -andak ածանցը: Իրանյան փոխառությունների ցանկում, այս բառի դիմաց, մենք կարդում ենք՝ «asp+?»⁴:

Մենք կասկածից վեր ենք համարում այն հանգամանքը, որ -andak իրոք ածանց է՝ կազմված -and ենթակալական (ներկա) գերբայի իմաստ արտահայտող ածանցից (որը, հավանաբար, գալիս է հնիս. նույնիմաստ -ent ածանցից) և -ak ածանցից: Այս բանը (այսինքն՝ -andak-ի ածանց, այն էլ ենթակալական գերբայի իմաստով ածանց լինելը) ապացուցելու համար կարելի է հենվել հենց նույն առավանգակ բառի վրա: Կասկածից վեր է, որ այստեղ կա asp արմատը, որ նշանակում է «ձի», ուստի առավանգակ բառացի պիտի նշանակեր՝ «ձիավոր, ձիավարող»: Որ այդ այդպես է, պերճախոս կերպով կարող է ապացուցել, թեկուզ, բառիս ֆրանսերեն համանիշը՝ chevalier, որը կազմված է cheval «ձի» արմատից և -ier ենթակալական գերբայի իմաստ էլ արտահայտող մասնիկից (հմտ. boursier «1. թոշակառու. 2. բորսայում խաղացող», portier «դռնապան», cordonnier «կոշկակար» և այլն): Ինքը՝ Աճառյանն էլ, բառակապակց (ամբողջ) բառի ստուգաբանությունը տալիս, կապելով այն պհլ. buvandak (կատարյալ, ամբողջ, լրացյալ) բառի հետ (որից է նաև մեր բովանդակ բառը), ավելացնում է. «Իրանական ձևը բուն ներկա գերբայ է...»:

Այսպես, ուրեմն, եթե -անգակ պարսկական ածանց է, այն էլ վերոհիշյալ իմաստով, ապա սուրհանգակ բառացի պիտի նշանակի՝ «սուրհանգող (սուրացող)»:

Իմաստային տեսակետից հմտ. ֆր. courrier «սուրհանգակ», որ գալիս է ֆր. courir «վազել» բաշից (սա էլ իր հերթին ծագում է լատ. curro «վազել» բաշից, որից է նաև լատ. cursor «սուրհանգակ»): Լատ. cursor և ֆր. courrier բառերի մեջ կան ենթակալական գերբայ կազմող -or և -ier ածանցները: Հմտ. նաև պրս. navand «1. արագավազ նժույգ, 2. սուրհանգակ» (սրա-

³ Արմ. բառ., հատ. 2, էջ 377:

⁴ Տե՛ս «Հայոց լեզվի պատմություն», 1 մաս, էջ 316-318:

Տե՛ս նույն տեղում, էջ 244:

⁶ Արմ. բառ., հատ. Ա, էջ 1039:

⁷ Սուրալ և սուրհալ հնում գուդահեռ զործածվում էին: Արդի գրականում պահպանվել է սուրալ, թեև հանդիպում է նաև սուրհալ ձևը (հմտ. «Ղաղարը փորի տակից ձի քշելով, բռնեց սուրհանգող ջիրիղաձողը...» — Ա. Վ. Ի ս տ հ ա կ յ ա ն, Ուստա կարո):

նից է հյ. նուենդ «սուրհանդակ»⁸: Պրս. pavik «սուրհանդակ» (<հյ. փայիկ «նույն նշ.»), որ գալիս է պրս. pay «ոսք» արմատից (>հյ. փայ «ոսք»)⁹:

Պհլ. *pešaspik (հառաջընթաց ձիավոր) բառից, որը կազմված է pes «հառաջ», asp «ձի» արմատներից և -ik ածանցից, ունենք հայերեն պեշասպիկ (սուրհանդակ, իշխանավորի առաջից փազույթ ձիավոր)¹⁰:

Այսպիսով, սուրհանդակ բառն էլ պետք է համարել մեկն այն բառերից, որոնց մի կեսը արդեն պարսկերեն լինելով՝ հայտնի է որ ամբողջությամբ պետք է պարսկերեն լինի, բայց ո՛չ մի իրանական լեզվի մեջ գոյություն չունին...»¹¹:

3. ԴՐԱՆԻԿ

Այս բառը Արմ. բառ.-ում հիշատակված է բուն հայկական դուռն արմատի տակ, իբրև նրանից կազմված¹²:

Բայց կան մի քանի հանդամանքներ, որոնք մեզ մղում են ենթադրելու, որ դրանիկ ոչ թե հայկական կազմություն է, այլ պարսկական փոխառություն:

Առաջին՝ -իկ փոքրացուցիչ մասնիկ չէ:

Երկրորդ՝ մենք չունենք -իկ ածանցյալ և բառի սեռական հոլովով կազմված գոյականներ. բառի սեռական հոլովածից մենք կազմել ենք ու կազմում ենք հատկացական ածականներ (երբեմնի կամ այժմ էլ կենդանի), այն էլ -ական ածանցյալ, ինչպես՝ առնական, միութենական, դասերական, արեւակցական, քրոջական և այլն:

Եվ երրորդ՝ կա Աճառյանի, պատմականորեն միանգամայն արդարացի ու ճշմարտացի, այն դիտողությունը, թե՝ «Պարսկական քաղաքակրթության և լեզվի ազդեցությունը իր մեծագույն աստիճանին է հասնում պետական կազմի վերաբերմամբ. այստեղ բնիկ հայ բառ գրեթե չկա (8 բառ միայն), իսկ պարսկերենից փոխառությունները 166 հատ են...»

Այս բոլորը ցույց է տալիս, որ հին հայոց փարչական ձևը, դիվանական գործողությունները, հարկալին սխառմը, առգմագիտությունը, ղենքերը, մի խոսքով ամբողջ պետական կազմը պարսկական ձևով էր»¹³:

Այսպիսով, մեր կարծիքով, հայ. դրանիկ բառը դուռն բառի հետ կապվում է այնքանով միայն, որ դուռն ցեղակից է պրս. dar նախնանիշ բառին: Եվ դրանիկ պետք է կապել իրան. *daranik կամ *daranig (ենթադրվող) ձևի հետ: Հայերենը -անիկ պարսկական մասնիկն ունեցող ալո միակ բառը չէ, որ փոխ է առել իրանական լեզվից, մենք ունենք նաև պասանիկ «թիկնապահ զինվոր», որ գալիս է պհլ. pasānig նախնանիշ բառից, որի արմատն է pas «պահել» (որի *pah- տարբերակից է նաև հյ. պահ արմատը)¹⁴: Թուրանիկ «հարուստ, մեծատուն» (<պհլ. tuvanik, պրս. tuvana «նույն նշ.», որոնք ծագում են զնդ. tav «զորեկ, կարողանալ» արմատից)¹⁵:

⁸ «Հայոց լեզվի պատմություն», I մաս, էջ 276:

⁹ Նույն տեղում, էջ 280:

¹⁰ Արմ. բառ., հատ. Ե, էջ 1037—1038:

¹¹ «Հայոց լեզվի պատմություն», I մաս, էջ 316:

¹² Արմ. բառ., հատ. Բ, էջ 602:

¹³ «Հայոց լեզվի պատմություն», I մաս, էջ 303:

¹⁴ Նույն տեղում, էջ 279—280:

¹⁵ Արմ. բառ., հատ. Բ, էջ 1287—1288:

Իսկ ինչ վերաբերում է հարցի հնչյունական կողմին, (*daranīk - դրանիկ), ապա կարելի է ասել, որ, թեև հաղվադեպ, բայց, անուամենայնիվ, հայերենում ունենք պարսկերենից փոխառյալ բառերի նախաշեշտ վանկի ա-ի կորուստ (հմմտ. օժանդակ և օժնդակ, ղժանդակ և ղժնդակ):

4. Լ Ո Ղ

Այս արմատը բախական զարգացած ձայնդարձներ ու տարրերակներ ունեցող արմատ է՝ լող, լոյղ, լիւղ, լօղ, լուղ, լեղ | ղող, ղոյղ, ղիւղ, ղօղ, ղուղ, ղեղ:

Արմ. բառ.-ում լող մենք գտնում ենք իբրև նույնարմատ լող (զլան) բառի հետ. բնիկ հայկական բառ. որ գալիս է հնիս. լել- (շարժել, ցնցել) արմատից (լօլ- ձայնդարձ): Ի հաստատուժն սույն ստուգաբանություն իմաստային կողմի՝ համեմատվում են հետևյալ դարձվածները. Յուդը, փալտը և բոլոր թեթև մարմինները լողում են (այսինքն՝ շարժվում են — Պ. Ի.) ջրվերեսին. նավը լողում էր (այսինքն՝ առաջ էր շարժվում — Պ. Բ.) ալիքների վրայով և այլն¹⁶:

Թվում է, թե լող (լողալ) և լող (զլան) արմատների՝ «շարժվել» ընդհանուր նշանակություն վրայով իմաստային կապը երևութական է հենց թեկուզ այն պատճառով, որ վերոհիշյալ դարձվածների մեջ լողալ բայի «շարժվել» իմաստը ածանցված է նրա հիմնական՝ «լող տալ» նշանակությունից, փոխաբերության ճանապարհով:

Այսինի հավանական է թվում լող (լողալ) արմատը կապել բնիկ հայկական լուալ բայի արմատի հետ (որը գալիս է հնիս. քլս- արմատից, սա էլ իր հերթին ներկայացնում է հնիս. քլս- արմատի ստորին ձայնդարձը):

Այս բանին մեղ մղում է «լվանալ» և «լողալ» իմաստների խիստ սերտ կապը ինչպես մեր, այնպես էլ այլ լեզուներում: Հմմտ. լոզանամ՝ քրոլոր մարմնով լուացեալ լինել, մաքրիլ ջրով ըստ օրինաց, մկրտիլ և լողիլ ի ջուրս(!)...», լուալի, լուալիք «տեղի լուանալոյ կամ լողանալոյ», լուացալան լուացարան, լողարան»¹⁷:

Լող արմատի մեջ «լվալ» և «լող(ան)ալ» իմաստների համատեղման պերճախոս ապացույց է լողանալ բառը, որ գառական դրարարը չուներ, և որը, մեր համոզմամբ, առաջացել է իմաստային հիշյալ տարրերությունը նաև ձևական տարրերաթյամբ հաստատակառ անհրաժեշտությունից (լողալ «լող տալ» — լողանալ «լողանալ»):

Բացի դրանից, մեր գառական մատենագրություն մեջ, գատելով բոտեճի-ում բերված բաղմաթիվ օրինակների, կան շատ տեղեր, ուր գծվար է նույնիսկ որոշել, թե տվյալ գեպքում հեղինակը լուալ կամ լուանալ և կամ լողանալ բայը «լող(ան)ալ» իմաստով է օգտագործում, թե՛ «լվանալ»: Բերենք մի քանի օրինակներ. «Իջեալ գոստըն փարաւոնի լուանալ ի գետն», «Պատանեակն էջ լուանալ լեզր գետնն»¹⁸, կամ «Յանկացաւ թագաւորն լողանալ ի գետն»²⁰:

¹⁶ Արմ. բառ., հատ. Գ, էջ 248—249:

¹⁷ Նույն տեղում, էջ 272—273:

¹⁸ ՆՃԲ, հատ. Ա, էջ 891, 893, 884:

¹⁹ Նույն տեղում, էջ 833:

²⁰ Նույն տեղում, էջ 891:

Ի վերջո, մեր կարծիքով, կարևոր է նաև այն հանգամանքը, որ հին դարերում «լվացվելը» նույն «լողանալն» ու «լողալն» էր (դետում կամ մի որևէ այլ ջրավազանում):

Իմաստացին կողմի համեմատության համար բերենք օրինակներ նաև այլ լեզուներից. հնիւ. նույն plu-, pleu- արմատից (որից էր մեր լուալ-ը) ունենք սիր. plavate «նավել, լողալ», ռուս. плавать «լողալ, նավել», ղնդ. frav- «լողալ, հոսիլ», յազգ. fəraw- «առատ օրով լվալ»: Ունենք հնուն. πλύνω «լվալ» և πλέω «լողալ, նավարկել»²²: Հնուն. λούω «լվալ, լողացնել», լատ. lavo «լվալ, լողացնել», որից՝ lavatio «1. լվացվելը, լողանալը. 2. լողարան (վաննա). 3. լողասենյակ», lavacrum «լողարան, բաղնիք», անգլ. to lave «լվալ, լողացնել», որից laveer «խուսաճնավել»⁽¹⁾²³:

Ի վերջո, կարելի է վկայակոչել նաև լող արմատի կրկնությունը կաղմրված լուղղ ձևը (Դվ. բրբ.), որ նշանակում է «լվացվելը, լողանալը»:

Այսպես, ուրեմն, մենք գտնում ենք, որ լող արմատը (իր բաղմամբիվ ձայնդարձերով ու տարբերակներով) ներկայացնում է բուն հայկական լու- արմատի ածած ձևը (աճականն է լ || դ):

Լ և դ աճականները հիշատակված են Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության երրորդ հատորում (Երևան, 1957, էջ 63): Այս աճականներով կազմված բառերից Աճառյանը հիշատակում է դայլ, ձոյլ, մզիլ, պալար, սլաք (լ-ով), խուղ (հիւղ), աւղ (-ւօ մասնիկով), սաեղծել, պղպջակ բառերը (նույն աեղում):

Ահա հենց այս լ || դ աճականով էլ կազմվել է հիշյալ լող արմատը, իսկ լ || դ աճականը, ինչպես մի քիչ հետո այլ կապակցությամբ կտեսնենք, կա նաև այլ բառերի մեջ և առհասարակ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, բավական տարածում գտած աճականներից է:

5. ՆԻԼ և ՆԻՎ

Նիւ նշանակում է «կտոր, պատառ (մանավանդ շորի)», արմատն առանձին սնդորթածական է, գտնվում է միայն մեր բարբառների մեջ: Սրանից ունենք նոր գրականում՝ ծվեմ, ծվառել, բարբառներում՝ Ղրբ. ծիւ ծիւ (պատառ-պատառ), Երև., Նր. ծուառել (կտրտել, բզկտել) և այլն: Իսկ ծիլ (որ և՛ ծիղ, ծիւղ «խորվ», ծեղ. այստեղից նաև ծղօտ) նշանակում է «բողբոջ», «ընձուղ» (բարբառներում՝ նաև «ցողուն», օր.՝ Ալ. ձեղ 1²⁴):

Սրա և նախորդի աղերսակցությունն ակնբախ է: Հմմտ. թեկուզ՝ Աղլ., Գոր., Ողմ. ծեղ, Ղրբ. ծըւղ «փայտի կտոր», Տիւ. ծիղ, Ջղ. ծուղ «հարգի

²¹ Արմ. բառ., հատ. Գ, էջ 272—273:

²² Н. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, էջ 1331—1332, 1327.

²³ Նույն աեղում, հատ. I, էջ 1036:

²⁴ Webster's International Dictionary, Springfield, Mass., U.S.A., 1904, էջ 835:

²⁵ Արմ. բառ., հատ. Գ, էջ 248:

²⁶ Նույն աեղում, էջ 768:

²⁷ Նույն աեղում:

²⁸ Նույն աեղում, էջ 768—770:

կտոր», ծղան, որ «շերտ» իմաստով հիշած է Բառ. Երեմ., ինչպես նաև վրաց. (հայերենից փոխառյալ) ծիլի «մաս, բաժին, վիճակ գցել» (!)²⁹:

Այստեղ նույնպես մենք հանդիպում ենք 1 || ղ աճականին:

6. ՇԻԻ || ՇԻԻՂ

Եիւ նշանակում է «խաղողի կուտերն ու կեղեր, ճառած խաղողի ֆնացորդը», Բառ. Երեմ. ունի շիւ «ճյուղ, ոստ» (այս իմաստն ունի նաև նոր գրականում), Մրդ. շիվ «խաղողի թևը», Երեւ., Մկ., Սլմ. շիվ «մատղաշ, դալար, նոր դուրս տված ճյուղ», Հմշ. շիր «զգումի կամ ձմերուկի թևերը», Ղրբ. շեվ «մատղաթի ծառ կամ թարմ ոստ», Ղրբ. շե՛վուտ «նորատունկ անտառ», Եվդ. շիվեյ «խաղողի ողկույզի հատերը փետել» (!): Այս բառն անցել է նաև քրդերենին (siv «խաղմուկ», siv «գավազան, ծխամորճ») ³⁰:

Այս արմատի հետ նույնն է նաև շիւ «ջուլհակի ձեռքի կողքի փայտը» ³¹:

Եիւ բուն հայկական բառ է, դալիս է հնիս. scip «գավազան, բարակ ճյուղ» արմատից: Նրան ցեղակից են՝ հուն. skīpon, լատ. scipio «ձեռքի գավազան», լատ. scapus «բուն, բույսի ցողուն», scopa «բարակ ճյուղ, շիվ», հրդ. skaft, հնչյաւ. skapt «թառ» ³²: Իսկ շիւղ (որ և՛ շեղ, շիղ) նշանակում է «ճյուղի կամ ծղոտի բարակ կտոր», բարբառներում՝ նաև «գործելու ճաղ» ³³:

Եիւ և շիւղ բառերի այս բազմազան իմաստների ուշադիր համադրությունը կասկած չի թողնում այն բանում, որ սրանք նույնարմատ են, և վերջինս ներկայացնում է շիւ-ի աճած ձևը (նույն 1 || ղ աճականով):

7. ՔՈՂ կամ ՔՅՂ

Քող նշանակում է ծածկույթ, երեսի ծածկոց. և սաստկականով նույն արմատից կազմված են սքող կամ սքոդ: «... Բոլորն էլ գրված թե ուով և թե օւով. ո ըն է նախնականը՝ հայանի չէ» ³⁴:

Անհավաստի ստուգաբանությունների սյունակում Աճառյանը մասնավորապես հիշատակում է. «ՆՀԲ լծ. հյ. գաղել, գողել, սքողել, հն. քա՛լիմա, և Patrubany... հնիս. squeu- ծածկել արմատից» ³⁵:

Զգիտենք՝ ի՞նչն է ստիպել Աճառյանին Patrubany-ի ստուգաբանությունը անհավաստի համարելու (գուցե 1 || ղ-ի հա՞րցը), բայց մեզ թվում է, թե քող || քոդ արմատի իմաստային (և հնչյունական) կապը հնդեվրոպական հիշյալ արմատի հետ՝ ճիշտ է նկատված: Իրրե ապացույց կարող ենք վկայակոչել, թեկուզ, ֆր. voile բառը, որ նշանակում է «1. քող. 2. առագաստ» և

²⁹ Նույն տեղում: «Իաժանել» — «ծիլ», «ցողուն» իմաստային պարզապես վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», հաս. զիտ., 1956, № 7, էջ 45—47:

³⁰ Սլմ. բառ., հատ. Ե, էջ 367:

³¹ Նույն տեղում, էջ 368:

³² «Հայոց լեզվի սլաոմություն», 1 մաս, էջ 121:

³³ Սլմ. բառ., հատ. Ե, էջ 353—354:

³⁴ Նույն տեղում, հատ. Զ, էջ 1500:

³⁵ Նույն տեղում, էջ 1500—1501:

գալիս է հնիս. vol- «ծածկել» արմատից (նույն արմատից են նաև հյ. գաղել, գող, գաղանի, ֆր. voler «գողանալ»)³⁶:

Այսպիսով, մենք կարծում ենք, որ բող (բող) առաջացել է հնիս. squeu- «ծածկել» արմատից, նրա առանց s-ի ձայնդարձից: Այդ նույն՝ squeu- «ծածկել» արմատին են հանդում նաև հյ. ցիւ, բիւ, խուղ (հիւղ) բառերը³⁷: Այսպիսով ստացվում է, որ գիւ ունենում է ոչ միայն բիւ, այլև բող (բող) ձայնդարձները (վերջիններս՝ կազմված լ || դ աճականով): Հնիս. sd > g || ք հարաբերություն համար հմմտ. նաև՝ ցել, ցեղ || քաղել³⁸:

8. ՅԱՅԼ(Բ)

Արմ. բառ. ունի այս արմատը (անեղարար գործածված)՝ «ազունջ, աճակ» իմաստով:

Այն, մեղ թվում է, պետք է կապել բուն հայկական ցել (հնիս. skel- | sqel-) արմատի հետ, որի բնդհանուր իմաստն է «բաժանմունք»: Այս բնդհանուր իմաստն ունեցող արմատից զուգույթմամբ «մարմնի մաս» նշանակությունն ունեցող բառի կազմումը եղակի երևույթ չէ: Եւնենք նիւղ (բնդհանուր իմաստը՝ «պատռելով իրարից բաժանել» — Արմ. բառ., հատ. Դ, էջ 656) և սիւ (որը, հատկապես մեր բարբառներում, բացի «ճյուղ» նշանակությունից, պատահում է նաև «թեւ», «տոք», «աճուկ»() իմաստներով³⁹): Կամ՝ շառաւիղ բառը, որ պետ հին շրջանից մեր ընդվուս օգտագործվել է «բնձյուղ», «գավակ, սերունդ», ինչպես նաև «մարմնի մասեր»() իմաստներով⁴⁰:

Այսպիսով, ցայլս բառի կապը ցել արմատի նախնական իմաստի հետ, թվում է, աներկրայելի է, և իմաստային անցման համար հիմք է հանդիսացել այն, որ աճուկը սրունքների բաժանման մասն է: Ինչ վերաբերում է հարցի հնչյունաբանական կողմին, ապա ցել — ցայլ(ր) հնչյունական հարաբերակցություն համար կարելի է համեմատել՝ իւեր — իւայր:

9. Շ Ո Ղ

Արմ. բառ. ունի շող «արևի ճառագայթ, նշույլ, ցուրք»: Այս նույն արմատից են նշող և նշոյլ⁴¹:

Քննությունը ցույց է տալիս, որ այս շող արմատը իմաստային (և հնչյունական) ամենատերտ կապն ունի քիչ առաջ հիշատակված շիւղ || շիղ || շեղ (ճյուղ) արմատի հետ և ներկայացնում է նրա մի ձայնդարձը՝ առաջացած «բաժանվել» բնդհանուր նշանակություն վրայով՝ փոխաբերություն ճանապարհով:

Դրանում համոզվելու համար կարելի է բերել իմաստային համանման զարդացման շատ այլ օրինակներ: Նառաւիղ «1. բնձյուղ, բողբոջ, ծիւ. 2. գավակ, սերունդ», «մարմնի մասեր», ինչպես նաև՝ «շող, ճառագայթ, կայծ»

³⁶ Տե՛ս Արմ. բառ., հատ. Բ, էջ 248:

³⁷ Նույն տեղում, հատ. Զ, էջ 1076:

³⁸ Նույն տեղում, էջ 1056 — 1057:

³⁹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հայկական ՄՍԽ ԳԱ «Ներկայացրեք», հատ. ԳԽԽ, 1956, № 7, էջ 15 — 16:

⁴⁰ Արմ. բառ., հատ. Ե, էջ 278:

⁴¹ Նույն տեղում, էջ 393 — 395:

(այս բոլոր իմաստներն էլ վկայված են դասական շրջանից): Բարբառներում՝ Ակն. շառվիկի «ընծյուղ», Խրբ. շարվեղ, շեռվիղ արևի լույսը, ցուքը, լույսի տնդրադարձումը, օդի շարժումը տաքությունից. հմմտ. Պոռչյան, Յեցեր... Իսս էն ի՞նչ ճրագի շառավիղ ա⁴²:

Իմաստի դարգացման համար հմմտ. նաև՝ լատ. radius «1. ձողիկ. 2. անվի ճաղ. 3. մաքոք(!)⁴³. 4. շրջանակի շառավիղ. 5. ճառագայթ. radii solis «արևի ճառագայթները», radio «շողարձակել, շողալ, փայլելիկ», հհուն. ρᾱδις «1. ճառագայթ. 2. փայլելում. 3. կայծակ. 4. փայլատակում. 5. ճաղ»⁴⁴, նհուն. ρᾱδις «1. շառավիղ, 2. ճառագայթ. 3. անվի ճաղ». անգլ. radius «շառավիղ. ճաղ. ճաճանչոսկր», անգլ. beam «ձող. ծառ. ճառագայթ»⁴⁵. ֆր. rayon «ճառագայթ», «դարակ»(!), «շառավիղ», «ճաղ», ռուս. луч «ճառագայթ», նաև՝ «մարիափունջ», որից лучина «տաշեղ. 2. մարխ (որպես ճրագ)»⁴⁶. արաբ. شع su a «1. շող, ճառագայթ. 2. ճաղ. 3. շառավիղ»: Մա դալիս է արաբ. شع sa'a (բաժանվել, տարածվել, ճառագայթ արձակել) արմատից⁴⁷:

10. Յ Ո Ւ

Յոլ նշանակում է՝ «1. ծխի և շողու վեր բարձրանալը. 2. փայլ. 3. կրակի դուր»: Առաջին իմաստով հնից չի ավանդված. կա ցոլանալ ծուխը կամ շողին վեր բարձրանալ, ցոլել կրակը դուրս ժայթքել, ցոլալ փայլել, փայլ-փրլիլ»⁴⁸:

Ձևոքի տակ տեսնալով շող բառի վերոհիշյալ վերլուծությունը՝ դժվար չէ տեսնել ցոլ բառի կապը բնիկ հայկական ցել արմատի հետ (որի ընդհանուր իմաստն է, ինչպես բազմիցս արդեն հիշատակել ենք, «բաժանմունք», և որին հանդուժ են ցեղ, քաղ, ինչպես նաև ցող, ցողուն և ցողուն բառերը), մանավանդ Արմ. բառ.-ում էլ, ցել արմատի տակ, նշված է, որ հանդիպում է նաև ցելուլ (փայլատակել), որի կապակցությունը Աճառյանն ավելացնում է, որ «այս բառը կարող է լինել ցոլուլ ձևից կամ նոր պատկերավորություն (Լրկնքի ճեղքվիլը)»⁴⁹:

Մեզ թվում է, որ Վթե՝ ցելուլ և թե ցոլալ միևնույն արմատի ձայն-դարձներն են, իսկ իմաստային տեսակետից՝ իրոք փոխարկություն:

⁴² Արմ. բառ., հատ. Ե, էջ 278—279:

⁴³ Հմմտ. շիւ «շյուղ» և շիւ «ջուլհակի ձեռքի կողքի փայտ»:

⁴⁴ И. X. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. 1, էջ 73:

⁴⁵ Webster's International Dictionary, էջ 127:

⁴⁶ «Ռուս-հայերեն բառարան» (4 հատորով), հատ. 2, էջ 182:

⁴⁷ «Арабско-русский словарь» проф. X. K. Баранова, М., 1958, էջ 508:

⁴⁸ Արմ. բառ., հատ. 2, էջ 1085:

⁴⁹ Նույն տեղում, էջ 1056:

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ СЛОВ

П. С. БЕДИРЯН

(Р е з ю м е)

На основе внутренних законов развития армянского языка и путем использования возможностей историко-сравнительного метода языкознания в статье уточняется этимология десяти слов армянского языка. Показывается, что из них три слова являются заимствованиями из других языков (*հեքիաթ* — из арабского, *սուրհանդակ* и *դրանիկ* — из персидского), а остальные семь (*լոյ*, *ծիւ* || *ծիլ*, *շիւ* || *շիւղ*, *քոյ* || *քող*, *ցալ*(*ք*), *շոյ*, *ցոլ*) являются армянскими словами и связаны с соответствующими формами индоевропейского языка — основы.